

Ձերբակալվել է Սաակաշվիլիի անձնական ֆոտոլրագրողը

July 7, 2011

Ձերբակալվել է Սաակաշվիլիի անձնական ֆոտոլրագրողը

 [georgian_flag.jpg](#) [1]

Վրացական լրատվական գործակալությունները հայտնում են, որ ձերբակալվել են նախագահի անձնական ֆոտոլրագրող Իրակլի Գեդենիձեն և նրա կինը: Արտաքին գործերի նախարարության մամուլի կենտրոնի լուսանկարիչ Գիա Աբդալաձեն, Եվրոպական ֆոտոլրատվական գործակալության աշխատակից Ջուրաբ Կուրցիկիձեն և ֆոտոթղթակից Շախ Այվազովը` Associated Press-ից նույնպես ձերբակալված են:

InterPressNews լրատվական գործակալությունը մեջբերում է Գիա Աբդալաձեի կնոջ խոսքերը, որը ենթադրում է, որ իր ամուսնուն մեղադրում են լրտեսության մեջ (հոդված 314 Վրաստանի ՔՕ):

Համաձայն Ներքին գործերի նախարարության հայտարարության` ձերբակալվածները մեղադրվում են օտարերկրյա կառավարություններից մեկի հովանու ներքո գործող հետախուզական կազմակերպությանը Վրաստանի շահերին վնասող տեղեկատվություն տրամադրելու մեջ:

ՆԳ նախարարությունը հետաքննություն է սկսել:

Ըստ վերջին տվյալների` Associated Press-ի ֆոտոթղթակից Շախ Այվազովին ազատ են արձակել: Այս մասին հայտնել է նրա կինը:

Աղբյուր: [Media.ge](#) [2]

Թեմատիկ նյութեր

[Գրիգոր Ամալյան. «Սարք ունենալ-չունենալը դիտեր որպես սեփական հայեցողություն. ոչ թե իրավունքի սահմանափակում»](#) [3]

[2012 թվականի ընթացքում LՀԱ-ի իրականացրած հետազոտությունները](#) [4]

[LՀԱ-ի ծրագիրը One World Social Innovation միջազգային մրցույթի լավագույնների շարքում](#) [5]

[Ditaket.am: Հաշմանդամ աղջկա երազանքն իրականություն դարձավ](#) [6]

[Irazek.am ընտրական ուղեցույցում քաղաքացիների հաղորդագրությունների վերլուծություն](#) [7]

Source URL: <http://www.jnews.am/node/1388>

Links:

[1] http://www.jnews.am/files/georgian_flag.jpg

[2] <http://www.media.ge/en/node/41734>

[3] <http://www.jnews.am/interview-with-grigor-amalyan>

[4] <http://www.jnews.am/jff-studies-2012>

[5] <http://www.jnews.am/jff-project-on-one-world-social-innovation-award>

[6] <http://www.jnews.am/mane-asryan>

[7] <http://www.jnews.am/research-result-of-voters-complains-on-irazek>

